

ունեցած թիւին ժԸ. դարու վերջին քառորդին մէջ:

«Թիւ համօրէն հայոց Դրանսիրականիոյ հասանի դերթէ ի 10 հազար» կ'ըսէ նախ, եւ յետոյ նկատի կ'առնէ զանազան քաղաքներ:

Եղիսաբէթօպոլիս. «Ի 1787 ունէր տունս կամ գերդաստանս 427 եւ բնակիչս իբր 2100»:

Կեոլայի «բնակչաց թիւ իբրեւ 3600 համօրէն յազդէս մերմէ եւ գրեթէ ամենեքին վաճառականք»:

Սեմի Միգլօշի մէջ «են եւ յազդէս մերմէ իբր 140 գերդաստանք», ախինքն՝ 700 չունէ: Սեքվեգի մէջ «գտանին եւ յազդէս մերմէ 52 գերդաստանք եւ ողիք իբր 214»:

Պուաշօլի մէջ «գտանին յազդէս մերմէ 2 կամ 3 գերդաստանք»:

Սաւ Սէպէշ. «Սակաւ ոմանք յազդէս մերմէ»:

Սիպիու. «Այլ եւ սակաւ ոմանք յազդէս մերմէ կրպակաւորք»:

Մօրուշ վաշարիէլ. «Գտանին եւ յազդէս մերմէ իբր 10 տունք երեւելի վաճառականք»:

Օոփիէյ. «Գտանին անդ եւ յազդէս մերմէ քանի մի գերդաստանք վաճառականք»:

Գեգուի վաշարիէլ եւ Գանդա. «Գտանին եւ յազդէս մերմէ քանի մի գերդաստանք»:

Այմուտ. «Քանի մի տուն յազդէս մերմէ»:

Զլակնա. «Յազդէս մերմէ քանի մի գերդաստանք կրպակաւորք»:

Ապրուտ. «Քանի մի տուն յազդէս մերմէ»:

Տէվա. «Գտանին եւ յազդէս մերմէ քանի մի գերդաստանք»:

Օրատիա. «Են եւ յազդէս մերմէ իբր 10 տունք, յորս եւ գտանին աղնուականք մեծատունք»:

Թիմիշօրա. «Գտանին եւ սակաւք յազդէս մերմէ»:

Դուրտա. «Եւ քանի մի գերդաստանք յազդէս մերմէ»:

Սաւ Սէպէշ. «Եւ սակաւ ոմանք յազդէս մերմէ»:

Եղրակացութիւն մը հանելու համար այս բոլոր տեղեկութիւններէն, կը կարծեմ որ ժԸ. դարու մէջ 18,000 հայութիւն պէտք է ըլլար աղբի Ռումանիոյ սահմաններէն ներս, որուն 4000-ը Մուրադաշի, 1000-ը Պուքօվինայի,

10,000-ը Թրանսիրականիոյ, 2000-ը Տօպրուճաշի եւ 1000 ալ Մունթէնիոյ մէջ:

* * *

Կը հասնինք 19-րդ դարուն:

1825-ին, Հայր Մինաս Բժշկեանի այցելութեան ժամանակ (Ճանապարհորդութիւն Ի Լեհաստան, Վենետիկ, 1830) հայոց թիւը հետեւեալն էր ուսմէն երկիրներու մէջ. —

Սուչովա 200 տուն, Հօթին 20 տուն, Զերնօվից 30 տուն, Սէրաթ 10 տուն, Քիշնէվ 150 տուն, Ղաւշան 10 տուն, Օրհէյ 60 տուն, Թէլէնէլ 10 տուն, Ֆօլէշ 12 տուն, Պըլց 10 տուն, Լիփկան՝ 10 տուն, Պրերշան 15 տուն, Եղիսաբէթօպոլիս 450 տուն (2300 հոգի), Կեոլա 1000 տուն (6000 հոգի), Ճուրճով Սէնթ Միքըլօշ 140 տուն, Սիբիլիզ 52 տուն (220 հոգի), Տէվա՝ քանի մը տուն, Այնուտ քանի մը տուն, Թուրա՝ քանի մը տուն, Ռէկին՝ քանի մը տուն, Գեգուի վաշարհէլ՝ քանի մը տուն, Մօրուշ վաշարհէլ՝ 10 տուն, Նայսօց՝ 30 տուն, Օրատիա՝ 10 տուն, Թիմիշօրա՝ քանի մը տուն, Սիպիու՝ քանի մը տուն, Սաւ Սէպէշ՝ քանի մը տուն, Պուաշօլ՝ քանի մը տուն, Պուքրէշ 120 տուն, Ֆօքշան 60 տուն, Եաշ՝ 150 տուն, Թէլէնէլ՝ 200 հոգի, Ռօման՝ 110 տուն, Պօթօշան՝ 400 տուն, Օքնա՝ 60 տուն, Կալաց՝ 30 տուն, Սիլիսթրէ՝ 20 տուն, Պապատաղ՝ 40 տուն, Պրայա՝ 20 տուն, Իսմայիլ՝ 60 տուն, Քիլի՝ քանի մը տուն, Աքքէրման՝ 150 տուն:

Եղրակացութեան մը վերածելու համար այս թիւերը՝ 19-րդ դարուն սկիզբը այսօրուան Ռումանիոյ սահմաններուն մէջ 3500 տունի չափ հայեր պէտք է եղած ըլլան. ուրեմն մօտ 18,000 անձեր: Կէս դարու մէջ ուրեմն աճում չկայ:

* * *

19-րդ դարու կէսերուն քիչ մը աւելի աճած պէտք է ըլլայ հայերուն թիւը:

1863 Փետր. 12-ին Պուքրէշի Աղդ. Հոգաբարձութեան կողմէ Պոլսոյ Պատրիարքարանը զրկուած գրութեան մը մէջ կը կարգանք թէ նոյն թուականին Պուքրէշը 300 հայ ընտանիք եւ երեք քահանայ ունէր: Պարզ է որ ժԹ. դարու առաջին կիսուն զգալապէս աճած էր Մունթէնիոյ հայութեան թիւը՝ որովհետեւ Պուկարիոյ զանազան քաղաքներէն հայեր կու-